
մէջ մարմարեայ արձանագրութիւն մը (տե՛ս թիւ 22)· կան մէկ մեծ, երկու միջակ և երեք փոքր ջահեր, երկու կանթեղներ և ութ պատի կեռ աչտանակներ, ամէնքն ալ երեքդրօշոյց: Աւազ և փոքր խորաններուն վրայ միայն և ի՛ւրեւն մոմեղէններ, նոյնպէս ձիթաւոր և սեղանին մշտայոյս կանթեղը:

Մեծ դրան արտաքին պրանիին վրայ հաստատուած է մետաղեայ հովանոց ծածկոյթ մը, որ տաճարին մուտքը կը պատսպարէ արեւէ և անձրեւէ: Այս ծածկոյթին ներքեւ, նըկատելի չրջապատի մը մէջ ապուցուած է մարմարեայ տախ-



(թիւ 23) Արձանագրութիւն Ս. Աստուածածին եկեղեցւոյ

տակ մը, որուն վրայ քանդակուած է եկեղեցւոյ չինութեան յիշատակարան արձանագրութիւնը:

Որովհետեւ, ի հետեւին, Պէնի Սուրէյնի մօտակայքէն կ՚անցնի Հալիկ-ի ջրանցքը, որ յետոյ վերածուած է հանրակառքերու երկաթուղիի, մշտական թացութիւնէն երեսուն է դարձեր այս կողմերու գետինը. մտածեր այս պատճառու, -և